

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր աշխատակից պ. Բաքի իր ճանապարհորդութեան ժամանակ գտել է մի գրչապիւր աւետարան մէջ հայոց հին բնագործերի մի քանի օրինակներ, որոնց ընթերցանութեան եղանակը հայոց մետաղագործական արվեստին հարկադրաբար ծանոթացնելու համար, բայց դժբաղդաբար ժողովը արդէն վերջացած էր և հնագէտները դրանց անհետ կորուստի ենթարկուած էին, երբ մեր աշխատակցի նամակը ստացանք:

Երկու օր առաջ հրատարակեցաւ թիֆլիսեան ռուսաց «Вѣстникъ Кавказа» լրագրի մի համար, հրատարակութեան իրաւունքը չը կորցնելու համար:

ԽԱՐԿՈՎԻՑ պ. բժշկապետ և պրոֆէսոր ՇԵՐԹԵԱՆԵՐ ուղարկում է մեզ հետեւեալ մի քանի տողերը, որ խնդրում է մեզ տպագրել մեր լրագրի մէջ. «Բանիցս պատահեցաւ որ խարկով և կող հայերը, չը գիտեմալով իմ հասցէս, հարկադրով եղան դիմել ուրիշ բժշկներին: Այս պատճառով պատու ունեմ խնդրել ձեզ տպել ձեր պատուելի լրագրի մէջ իմ հասցէս, որ հետեւեալն է. Харьковъ, Театральная площадь, домъ Никовича»:

Ստացանք ՇԱՐԿՈՎԻՑ պ. Սարգիս Համբարձումեանցի 15 թուրք, բաժանորդագիրն «Ժողովրդական» լրագրի համար, Շամախու մի քանի հայ-աւետարանականներին:

Ստացանք ԱՍՏԱՐԿԱՆԻՑ 8 թուրք բաժանորդագիրն «Ժողովրդական» լրագրի հետեւեալ անձինքներին. Յովհ. Սթրանց, Ստեփաննոս Նազարեանց, Գրիգոր Ակուբեանց, Գեորգ Սթրանց, օր. Հակոբիսիմ Սթրանց, Խաչատուր Միրմանեանց, Գրիգոր Միրմանեանց և Խաչատուր Ֆաբրիկանեանց: Առաջվայ բաժանորդական փողերի հետ կանի 983 թուրք 13 կօպ:

ՂԱԼԱՐԻՑ հետեւեալ բաժանորդներ են գրվել «Ժողովրդական» լրագրին, ուղարկելով մեզ 17 թուրք. Թ. Կանկանեանց, Ա. Կանկանեանց, Ն. Անանեանց, Մ. Անանեանց, Թ. Միլիկեանց, Ա. Դամ վարդապետ, Լ. Թաւարէզեանց, Յ. Աստուածատուրեանց, Խ. Ղորոսեանց, Ա. Թանդոյեանց, Գ. Առաքելեանց, Մ. Թումանեանց: Առաջվայ փողերի հետ կանի 1000 թ. 13 կօպ:

Մինչև այժմ պ. Բերքեանի ֆոտոգրաֆիական ժողովածուն գրվեցին (Մշակի) խմբագրութեան մէջ երեք անձինք. Խոստանեանց և երկու եղբայրներ Արծրունի:

Երեքշաբթի օր, 20-ին հոկտեմբերի թիֆլիսի ժողովարանում լինելու է կոնցերտ յօգուտ չքաւոր գիմնադասարանների կոնցերտին կը մասնակցեն պ. պ. Ալիխանով, Կորգանով, Սպարկին, Ալա-ման, և տիկիններ Իվանովի, Շիլովի և օր. Կարապետեան:

Կիրակի, հոկտեմբերի 11-ին առաւօտեան ժամ. 11-ին պատարագից յետոյ Հաւաքարի Ա. Մարիամեան օրիորդական դպրոցը կատարեց իր գոյութեան տասն և միամեայ տարեդարձի հանդէսը: Ներկայ էին այդ հանդիսին ի միջի այլոց քաղաքագլուխ պ. Մատիւով, պ. բժշկապետ Միքայէլ Շահ-Պարոնեանց, պ. Իւրաչեանց և մեծ բազմութիւն, մասնաւոր կանանց սեռի, Պ. Կ. Թէմուրզեանց, որպէս ներկայացուցիչ դպրոցի կարգաւ դպրոցի ուսումնական հաշիւը անցնելու ուսումնական տարվայ և մի զաւարտ առեց դպրոցի ներկայ գրութեան մասին, որից երեքշաբթի, որ դպրոցը ներկայումս արդէն երեք դասարան ունի 73 աշակերտութիւնով և եթէ գործող անձինքներով Պարոնը վերջացրեց իր ճառը ուսումնական յայտնելով որ ինքն, բնիկ հաւաքարցի լինելով և գլխաւորապէս Հաւաքարում գործելով, վերջին երկու, երեք տարիներում նկատում է թիֆլիսի այդ քաղաքամասի մէջ մի նշանաւոր բարոյական և մտաւոր շարժում, նկատում է ինքնաճանաչութեան և ինքնագիտակցութեան հաստատ նշոյլներ: Արժ. տէր Գովհանէս Մարտիրոսեան, որպէս դանձապահ, ներկայացրեց անցեալ տարվայ ելու-

մտից հաշիւը, որից երեքշաբթի դպրոցի զանաքանը, մի անշան տարբերութիւն է ունեցել ծախսի և մուտքի մէջ, այն է 6 թուրք և մի քանի կօպէկ: Դպրոցի վարչութեան կողմից իր հիմնադիր Խորէն վարդապետ Ստեփանէին ուղարկված հեռագրին, այդ վերջինը պատասխանել էր հետեւեալ հեռագրով: «Շնորհաւորում եմ և ցնծում եմ. թող երկնային Ուսուցիչը օրհնէ բոլոր աշակերտութիւններին և դպրոցի բոլոր բարեկամներին յաջողութեամբ շարունակելու այդ ամենալուսնաւ գործը: Աստուած կը յիշէ այն աղանձ մշակներին, որոնք հոգում են իրանցից փոքրերի վրա: Աղօթում եմ Աստուծուն, որ ձեր ձեռքով դաստիարակված հայ օրիորդները ապրեն ընտանիքում այնպէս, ինչպէս սիրտը կրծքում: Յիշեցէք որ ամենաբարձր արժանաւորութիւնը բաղդաւոր քրոջ համար պէտք է լինի չը մոռանալ իր աղքատ և հիւանդ քրոջը:» Հանդէսը վերջացաւ աշակերտութիւնների ձեռագործների վիճակախաղով, որից գոյացաւ մօտ 163 թուրք գումար:

ՂԱԼԱՐԻՑ մեզ գրում են: «Մեզանում այդե-քաղը վերջացաւ բաւական լաւ: Բայց ուղիներում մեր նահապետական ձեռք առուտուր անող վաճառականները իրանց յիմարութիւնից այս տարի Նիժնի-Նովոգորոդի տնտեսականում իրանց սպասած օգուտը չեն ստացել, ուստի ուղումն նրանով իրանց վարձատրել, որ խեղդում են ինքն այգետներին և գինու գինը այնքան դժուար է, որ հազիւ թէ խեղճ այգետները կը հանեն իրանց ծախսած փողը»:

ԱԽԱԼ-ԲԱԼԻՔԻ մեր թղթակիցը գրում է մեզ: «Վերջին օրերս մանկանց տարափոխիկ հիւանդութիւնը, որի մասին գրած եմ ձեզ արդէն, կարծես աւելի էլ սաստկանում է: Առաւօտից մինչև երեկոյ եկեղեցու զանգակը իր տխուր ձայնը հնչեցնում է և վառեցնում է կենդանի մեռացած մարդկանց: Հետեւեալ թերեւ ցոյց կը տան իմ ասածին ճշմարտութիւնը: Օգոստոս ամսին մեռած են 12 մանուկներ, սեպտեմբեր ամսին քսան հոգի, իսկ հոկտեմբերի 1-ից մինչև այսօր, այսինքն տաս օրվայ ընթացքում մեռել են 17 մանուկներ: Այս համեմատութեամբ, ուրեմն, այս ամիսը կարող են 51 մանուկներ վախճանվել: Գրեթէ մի տուն չը կայ, որի մէջ գտնէ մի հիւանդ մանուկ չը լինի: Այդ տեսնվում է և տեղիս ազգային ուսումնաւարաններում: Վերաւերնք արական դպրոցը, ստորին պատարասական ուսումնաւարանի 53 աշակերտներից 12 հոգի հիւանդ են, միջին պատարասականի 55 աշակերտից 4 հիւանդ են, միայն առաջինում հիւանդ չը կայ»:

Պ. Սարգսեանց, Սովկալից, խնդրում է մեզ տպել հետեւեալ նամակը: «Թոյլ տուէք, պ. խմբագիր, ձեր պատական լրագրի միջոցով հրատարակել, որ 100 օրինակ պ. Շահաղիբեանի շարագրութեան «Հրապարակախօս ձայն» եւ իմ կողմից ձրիաբար ընծայում եմ հայոց դպրոցներին և մատենադարաններին Յանկայողները կարող են ստանալ երկու և աւելի օրինակ մեր կոնտորայից, Սովկալում, հետեւեալ հասցեով: «Въ Бакинскій торговый домъ Тагіева и др. Саркисовыхъ, Москва, на Мясницкой.»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԳԻԱ

«Times» լրագրին Կ. Պօլսից հեռագրում են հետեւեալը: Ռուսաց Ֆինանսների մինիստրութեան բարձր պաշտօնականներից մէկը գալը, երեւի, կը շտապացնի ֆինանսական բանակցութիւնների ընթացքը Բ. Գրան հետ: Ռուսաց զեսպան պ. Նովիկով, խիստ խօսքերով պահանջեց այնպապ պատասխան տալ իր գրութեանը, և Բ. Գրանը չը գիտէ թէ ինչպէս դուրս գայ այդ դժուար գրութիւնից, որը ինքն ստեղծեց հոկտեմբերի 3-ի իր գրութեամբ: Հաշուով այդ գրութեան մէջ այն եկամուտները, որ նա կարող է տալ իր պարտատէրերին, և յայտնելով որ Ռուսաստանին զինուորական կոնտրիբուցիայի վճարելը կը մտնի այդ հաշի-

մէջ, Բ. Գրանը չէ կարող մերժել պ. Նովիկովի պահանջները, որ վերոյիշեալ եկամուտներին մի քանիսը որոշվեն մասնաւորապէս կոնտրիբուցիան վճարելու համար: Անուղղակի հարկերը և Արեւելեան Բուլկիայից ստացած եկամուտի աւելորդ առաջարկված են թիւրքաց օրէկացիաների տէրերին բաւականացնելու համար: Կիսրոս կղզուց ստացած եկամուտի աւելորդ անգլիական կառավարութիւնն է վերցրել, նշանակում է, Ռուսաստանին բաւականացնելու համար բոլորարական հարկն է փնտռել: Ռուսաց կառավարութիւնը հաստատում է, որ եկամուտի այդ աղբիւրը, որը մինչև պատերազմը գոյութիւն չուներ, չէ կարելի թիւրքաց պարտատէրերին բաւականացնելու համար գործադրել: Ռուսաստանը, երեւի կը համաձայնվէր ընդունել բոլորարական հարկը գտնել կոնտրիբուցիայի մէկ մասը ստանալու համար, բայց բանը նրանումն է, որ հէնց այդ հարկը թիւրքեան չէր կամենայ ուսմանը յանձնել: Ճշմարիտ է, նա կարող էր կոնտրիբուցիան վճարելու համար իր ուրիշ եկամուտներից մէկը տալ, բայց դա հոկտեմբերի գրութեանը հակառակ կը լինէր, իսկ սուլթանը վախենում է յետ կանգնել իր այդ գրութիւնից իր ուրիշ պարտատէրերին չը քաջալերելու համար նոր պահանջներ անելու: Գրանը է նախագուշակել, թէ ինչպէս Բ. Գրանը կը դուրս գայ այդ դժուարութիւններից: Ռուսաց գրութեան առաջին մասում բոլորարական հարկի վրա ցոյց է տուած, որպէս եկամուտի այնպիսի աղբիւրի վրա, որը Բ. Գրանը իրաւունք չունի գրաւ դնել իր պարտատէրերի մօտ:

ՖՐԱՆՍԻԱ

Գրեվի, որ հրաւիրել էր իր մօտ Գամբետտային, վերջինի այցելութեան ժամանակ խօսեց նրա հետ ընդհանրապէս քաղաքական գործերի գրութեան մասին: Այդ խօսակցութեան ժամանակ Գամբետտա կարծիք յայտնեց, որ աւելորդ է այժմ քաղվել նոր մինիստրութեան կազմելով, քանի որ այժմեան մինիստրութիւնը հրաժարական չէ տուել և ազգային ժողովներն էլ չեն գումարվել: Հարկաւոր է սպասել, որ պատգամաւորների ժողովը քննէ այժմեան մինիստրութեան գործունէութիւնը, յայտնէ նրան իր հաւանութիւնը կամ դժգոհութիւնը և այնուհետեւ կազմել նոր մինիստրութիւն: Գրեվի, Գամբետտայի կարծիքը իմանալուց յետոյ, չը յանձնեց նրան նոր մինիստրութեան կազմելը, այլ պայմանաւորվեց նոր տեսութեան մասին պատգամաւորների ժողովի գումարվելուց յետոյ:

Գրեվի «La Paix» լրագիրը առաջարկում է Գամբետտային ամբողջ կեսնքի համար սենատոր նշանակել և յանձնել նրան մինիստրութեան կազմը, եթէ պատգամաւորների ժողովը չը վաւերացնէ նրա ընտրութիւնը: Հաւատացնում են, որ Գրեվի առաջ էլ հակված է եղել յանձնել Գամբետտային ներքին գործերի մինիստրութիւնը, միայն թէ որքան կարելի է նա հեռու փնտր արտաքին գործերին միջամտելուց: Այդպիսի առաջարկութիւն մինչև անգամ չէ արված Գամբետտային, որովհետեւ դա հակառակ է նրա օրինաւոր ինքնասիրութեանը:

Հոկտեմբերի 11-ին կայացաւ Ֆրանսիական մինիստրների խորհուրդը, որի ժամանակ գեներալ Ֆարր կարգաց իր գեկուցումը հիւսիսային Աֆրիկայի գործերի գրութեան մասին: Այդ գեկուցումից երեւում է, որ

արշաւանքը Կերուանի վրա յետաձգված է: Բարտեւիմի Սենտ-Լիւր հաղորդեց, որ մի քանի Ֆրանսիական և անգլիական զրահակիր նաւեր ուղարկված են Եգիպտոս և դրա պատճառն այն է, որ Բ. Գրանը ուղարկել է Եգիպտոս իր հաւատարմատարին: Եթէ վերջինները յետ կը կանչվեն, այդ նաւերը չեն երևայ Ալեքսանդրիայի առաջ: Առեւտրական մինիստրի գեկուցման համեմատ բանակցութիւնները Անգլիայի հետ առեւտրական նոր դաշնագրի մասին կարող են ցանկալի նպատակին հասնել:

ԳԱՄԲԵՏՏԱ ԵՒ ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿ

Փարիզում նորերումս լուր տարածվեցաւ, որ Գամբետտա գաղտնի ուղևորվել է Գերմանիա իշխան Բիսմարկի հետ տեսնվելու համար: Այդ առիթով «Times» լրագրի Փարիզի թղթակիցը հաղորդում է հետեւեալը: «1878 թվականի յուլիսին ես մի երկար խօսակցութիւն ունեցի իշխան Բիսմարկի հետ, որ այդ օրը շատ լաւ էր տրամադրված և երկար խօսում էր: Մեր խօսակցութիւնը կատարվում էր գերմանական դեսպան իշխան Զօհնլոէի և բարօն Զօլտէյնի ներկայութեամբ, որ վայելում էր Բիսմարկի կատարեալ հաւատարմութիւնը և, իբրեւ Փարիզի գերմանական դեսպանատան քարտուղար, շատ լաւ ծանօթ էր Ֆրանսիական քաղաքական գործերի գրութեան հետ: Իշխան Բիսմարկ խօսում էր զանազան առարկաների մասին. կոնգրեսի, պատերազմի, Ֆրանսիական քաղաքական գործիչների մասին և այլն: Այդ ժամանակ մէկը Գամբետտայի անունը յիշեց: «Գամբետտա, բացականչեց իշխանը, ահա մի մարդ, որին ես կուզենայի տեսնել իմ մահահանգիստում: Ինչ ուզում են ասել, բայց նա երեւելի մտրդ է: Նա իր բոլոր հայրենակիցներից բարձր է: Ասում են, որ նա շատ զրաւիչ մարդ է, մի և նոյն ժամանակ ամենքը համոզված են, որ զրաւիչ մարդիկ չեն կարող պետական երեւելի գործիչներ լինել:»—Թիւրք ինձ ասաց մի ժամանակ, ընդմիջեցի ես, որ դուք չափազանց զրաւիչ մարդ էք, բայց այնու ամենայնիւ դուք յայտնի էք իբրեւ երեւելի քաղաքական գործիչ:—Հազիւ թէ ինձ զրաւիչ համարեն Գերմանիայի մէջ, պատասխանեց Բիսմարկը և աւելացրեց, այո, ես չէի կամենայ մեռնել Գամբետտային տեսնելուց առաջ: Այդ խօսակցութիւնից յետոյ, երբ ես փնայի իշխան Զօհնլոէի և բարօն Զօլտէյնի հետ, ես մտածեցի, որ իշխանի ասածները Գամբետտայի մասին պատահական չէին: Ես նրանց յայտնեցի իմ միտքը:—Կարծեմ, նկատեցի ես, որ իշխանի երկու անգամ կրկնած ցանկութիւնը Գամբետտային տեսնելու մասին հասարակ պատահմունք չէր: Իշխանը չը պատմել Գամբետտային իր ասածները նրա մասին և կարծես նա ցանկանում է, որ ես բոլորը հաղորդեմ Գամբետտային: Գուցէ ինձանից լաւ էք ճանաչում կանցելին, ի՞նչ էք կարծում, արդեօք հարկաւոր չէ նրա և Գամբետտայի մէջ մի տեսակցութիւն կայացնել: Ես կը նախապատրաստեմ տեսնութիւնը, իսկ դուք բանակցութիւններ կատարեցէք: Իշխան Զօհնլոէ և բարօն Զօլտէյն համաձայնեցին ինձ հետ և մենք պատրաստվում էինք գործողութեան նախագիծը կազմել: Մի օրը ես այցելեցի բարօն Զօլտէյնին, հաւատացած լինելով, որ նա արդէն տեսնվել



է իշխան Բիսմարկի հետ և նրան բոլորը պատմել է: Բարձր հաղորդեց ինձ, որ ես ճիշդ եմ հասկացել իշխանի ասածները: Նրա պատկեր և որ ես կարող եմ բանակցութիւններ սկսել այդ տեսութեան վերաբերութեամբ, որ պէտք է կատարվի Արսիւն գետի մէջ: Քայքայ դուք ի հարկէ հասկանում եք, աւելացրեց նա, որ այդ տեսակցութիւնը կարող է նշանաւոր հետեւանքներ ունենալ, ուրեմն պէտք է մեծ զգուշութեամբ դործել: Բիսմարկ համոզված է, որ շուտով Ֆրանսիայի մէջ իշխանութիւնը դամբարանային ձեռքը կանցնի և այդ իշխանութիւնը վճռողական բնաւորութիւն կունենայ: Բիսմարկ խողաղով ինչ է ցանկանում և կամենում է մօտ ծանօթ լինել այն մարդու հետ, որից շուտով կախուց կունենան պատերազմը և խողաղութիւնը: Բիսմարկ կամենում է անձամբ իմանալ դամբարանային գաղտնի մտքերը զբաղման: Պէտք է մօտեցնել այդ երկու պետական գործիչներին և հարկաւոր է, որ նրանք միմեանց չը հանդիպեն իրեն լուրջ նամակներ: Անցնելով թող այնպէս էլ մնայ, այժմ պէտք է մտածել օպերային մասին և անհրաժեշտ է բոլոր այն անյարմարութիւնների առաջն առնել, որոնք կարող են վնասել այդ տեսակցութեան նշանակութեանը, որի ժամանակ չը պէտք է խօսիլ գաւառական համաձայնութիւնների և այժմեան գաղտնիքների փոփոխութեան մասին: Անհրաժեշտ է լաւ իմանալ, որ ոչ կանցնելը, ոչ գերմանական կայսրը և ժողովուրդը չեն թող տայ մինչև անգամ տեսական դատողութիւններ կատարված այն անցքերի մասին, որոնց պատճառով Ֆրանսիան ծածկվեցաւ գերմանական զինուորների դիմադրութեամբ: Այնու ամենայնիւ այդ երկու և րեւելի մարդկերանց տեսակցութիւնը կարող է ահագին օգուտներ տալ խողաղութեանը: Ես վճռեցի այս բոլոր խօսակցութիւնը բառ առ բառ պատմել դամբարանային: Քայքայ տեսակցութեան ժամանակ մենք խօսում էինք Բերլինի կոնգրեսի մասին: Վաղդիկաւոր գեւա չէր վերադարձել Բերլինից և ես առաջինն էի, որ կարող էի տեղեկութիւններ հաղորդել կոնգրեսի մասին: Իմ խօսակցութիւնը Բիսմարկի հետ ես կարողացայ մի շարքով յետոյ միայն դամբարանային հաղորդել: Իշխան Բիսմարկ լաւ կարծիքը դամբարանային մասին նրան շողորդեց, բայց այդ բանը չարգելեց նրան գնահատել տեսակցութեան նշանակութիւնը: Ես ամենից առաջ հարցրի, ի՞նչպէս անել, որ տեսակցութիւնը գաղտնի լինի: Հետագայում եղէք, ասաց նա, որ ես կարող եմ ծածկել իմ հետքերը, եթէ այդ կամենում եմ: Նորեւում ես այդ խօսքերը մոտերեցել, երբ Ֆրանսիական միւնիստրներից մէկը նկատեց ինձ ի՞նչ եղաւ դամբարանային: Մենք նրա հետքը կորցրինք: Իմ խօսակցութիւնը դամբարանային հետ բաւական երկար տեւեց: Միւս օրը ես տեսնվեցայ իշխան Լոհենբուրգի հետ և յայտնեցի նրան, որ դամբարանային համաձայն է գաղտնի տեսնելը Բիսմարկի հետ: Բիսմարկ դեռ էլի երկու շաբաթ պէտք է մնալ Արսիւն գետի մէջ և Լոհենբուրգի հետ ինձ այցելել նրան երկու օրից յետոյ բանակցութիւնների հետեւանքները իմանալու համար: Տեսնելով, որ տեսակցութիւնը կարող է շուտով կայանալ և որ մի անշնան խօսք անգամ որ և է կողմից կարող է նշանաւոր հետեւանքներ ունենալ, ես վախեցայ այն պատասխանատուութիւնից, որ ինձ վրա էի առել: Ես վճռեցի հրաժարվել այդ գործին մասնակցելուց, ներողութիւն խնդրեցի իշխան Լոհենբուրգից, չը գնացի այլ ևս պարտաւորութիւնը վճարել և ջնջել հողային լիզան: Իրանդական ֆեյդալների մեծամասնութիւնը վճռեց վարձական վճարը չը տալ հողատերերին մինչև որ Պարսէլ ազատված չը լինի: —Այ. Պարսէլը լրագրիւններին հաղորդում են: Ինչպէս յայտնի է, պետութիւնների ներկայացուցիչները առաջարկեցին Բ. Գրան մասնաւոր յանձնաժողով նշանակել Հայաստանում վերանորոգութիւններ մտցնելու համար: Բ. Գրանը համաձայնեց այդ առաջարկութեան հետ, պատասխանութիւն յայտնելով, ըստ չափու կարողութեան թաւակաւանցել բոլոր պետութիւնների պահանջները: Արդէն մի քանի օր առաջ, լրագրիւնները հաղորդում էին, որ Մուխտար-փաշան է նշանակված Բ. Գրան գլխաւոր կոմիտէի հետնակված Բ. Գրան գլխաւոր կոմիտէի հաղորդում են, որ պապը սուրբ Պետրոսի աղօթարաններից մէկում ընդունեց Հոսոմու հաւաքված ուխտաւորներին: Պապը տեսնվեցաւ նրանց հետ կարգիւններով շրջապատված լինելով: Նա ճառ խօսեց, որի մէջ յայտնեց, որ ուրախ է աւանդել իրան խաղաղների մէջ և գտնելով նրանց մէջ միութեամբ: Նա ապրում է թշնամիների մէջ. անբարոյական մամուլը աշխատում է նրա վարկը վայր գցել և թուլացնել նրա իշխանութիւնը, սպառնալով մինչև անգամ Վատիկանը գրաւել և պապին բանտարկել կամ աքսորել: Վերջացնելով իր խօսքերը, պապը հաւատացեալներին կուրի հրաւիրեց: «Վենք հոգեւոր զէնքով կը պատերազմենք և կը յաղթենք, ասաց նա: Օրհնում եմ ձեզ և իմ հայրենիքը: Իտալիան» Գաղաքը այդ օրը բոլորովին ճանգիտ էր: Ուխտաւորների ընդունելութիւնը, որոնց թիւը երեք հազարից աւելի էր, շարունակվում էր մինչև կէսօրվայ երկու ժամը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փարիզի լրագրիւնները հաղորդում են նոր մանրամասնութիւններ Գրէվի և Գամբետային մէջ կայացած վերջին բանակցութիւնների մասին: Տեսակցութիւնը, ինչպէս ասում են, շատ սրտաւռչ էր: Խօսակցութեան առարկայ էր նոյնպէս արտաքին քաղաքականութեան վերաբերեալ հարցեր, Գամբետան Գերմանիայի մասին խօսելով ասեց, որ նա օգլիւնի մինչև ութ զինուորված է, և յետոյ Ռուսաստանի մասին շատ լաւ խօսեց, ինչպէս հաւատացնում է «Köln. Stg.» լրագրիւր: Ներքին գործերի դրութեան վերաբերութեամբ, Գրէվի և Գամբետային մէջ համաձայնութիւն կայացաւ: Փարիզում սպասում են լոյր Գրէվի լի գալու, որը, իբր թէ աշխատում է նախապատրաստել անգլո-ֆրանսիական դաշնակցութեան կապերը, որպէս հակակշիռ երեք կայսրերի դաշնակցութեան: Այդ նախագծի մասին վաղուց է որ խօսում են, բայց նրա կայանալը շատ մեծ յոյսեր են գնում Գամբետային ապագայ միւնիստրութեան վրա, մանաւանդ, որ վերջինս դիտաւորութիւն ունի անձամբ ղեկավարել Ֆրանսիայի արտաքին քաղաքականութիւնը:

—«Neue Freie Presse» լրագրիւրը հաղորդում է, որ Չերնոգորիայի իշխան Նիկոլայ ճանապարհ է ընկնում Ռուսաստան իր օրդու, թագաժառանգ իշխան Կարլիէի հետ, նրան տեղաւորելու համար Պետերբուրգի պետական ուսումնարաններից մէկի մէջ: Իշխանը դիտաւորութիւն ունի մի քանի օր Վիեննա մնալ Ֆրանց-Ֆրանցի կայսրի հետ տեսակցելու համար: Վիեննա արդէն հասաւ իշխանի աղիւստաններից մէկը, Նիկոլայ Մատանովի, որը կը սպասի նրան այնտեղ, և յետոյ կուղեկցի դէպի Ռուսաստան: Մատանովի Չերնոգորիայի ղեկավար է նշանակված Պետերբուրգում և թագաժառանգ Կարլիէի գաստիարակ:

—Վիեննայից, հոկտեմբերի 6-ից, հեռագրում են հետեւեալը: Ներկ երեկոյան, երբ պոլիցիականները հողային լիզայի տեղական բաժնի գանձապահին բանտ էին տանում, անկարգութիւնները նորոգվեցան: Հաւաքված ամբոխը անդադար քարեր էր գցում մինչև անգամ այն ժամանակ, երբ կալանաւորվածը արդէն բանտում էր նրան տեղադրել: Պոլիցիականները, վերջապէս, ստիպված էին հրացաններ արձակել: Վերաւորվածների մէջ գտնվում է և մէկ երկուստաւոր տիկին: Որովհետեւ անկարգութիւնները դեռ եւ շարունակվում են, այդ պատճառով քաղաքային իշխանութիւնները հեռագրով պահանջեցին պոլիցիայի կազմակերպութիւնը զորեղացնել:

—Լոնդոնից հեռագրում են լրագրիւններին, հոկտեմբերի 6-ին, որ երեք գնդեր հրաման ըստացան մտնել Իրանդիա: Լոյր-կաշիկը կարգադրեց՝ Պարսէլին հրաժարեցնել Ուիկոնան կոմսութեան հաշտարար դատաւորների թիւից: Այլ տեղեկութիւնների համեմատ Գուբլի-նում երկէ նոր անկարգութիւններ պատահեցան, ամբոխը մի քանի անշնան լրագրիւնների խմբագրութիւնների պատուհանները կտրտեց, և քարեր գցելով ստիպեց պոլիցիային հեռանալ: Այն գիշերից յետոյ վիւնդերական ուժեր պահանջվեցան:

—Լոնդոնից հաղորդում են լրագրիւններին հետեւեալը: Լուր կայ, որ Գուբլիում փորձել են սպանել շերտերու Գաղափարներ, առաջին միւնիստրի օրդու, որը նորեւում Ֆորստերի օգնական նշանակվեցաւ Իրանդիան կառավարելու համար: Ներքին գործերի միւնիստր, սըր Վերնոն Գարկուր մէկ սպառնալից նամակ տուցաւ Պարսէլի կալանաւորութեան պատճառով: Մէկ լրագրի թղթակից տեսակցութիւն ունէր Պարսէլի հետ լանտում: Այդ տեսակցութեան ժամանակ Պարսէլ յայտնեց այն համոզմունքը, որ իր բանտարկութիւնը չի վնասի իրանդական գործին, և որ ժողովուրդը մինչև վերջը կը կատարի իր

պարտաւորութիւնը. ինքն չէ կարծում, որ կառավարութիւնը վճարել է ջնջել հողային լիզան: Իրանդական ֆեյդալների մեծամասնութիւնը վճռեց վարձական վճարը չը տալ հողատերերին մինչև որ Պարսէլ ազատված չը լինի: —Այ. Պարսէլը լրագրիւններին հաղորդում են: Ինչպէս յայտնի է, պետութիւնների ներկայացուցիչները առաջարկեցին Բ. Գրան մասնաւոր յանձնաժողով նշանակել Հայաստանում վերանորոգութիւններ մտցնելու համար: Բ. Գրանը համաձայնեց այդ առաջարկութեան հետ, պատասխանութիւն յայտնելով, ըստ չափու կարողութեան թաւակաւանցել բոլոր պետութիւնների պահանջները: Արդէն մի քանի օր առաջ, լրագրիւնները հաղորդում էին, որ Մուխտար-փաշան է նշանակված Բ. Գրան գլխաւոր կոմիտէի հետնակված Բ. Գրան գլխաւոր կոմիտէի հաղորդում են, որ պապը սուրբ Պետրոսի աղօթարաններից մէկում ընդունեց Հոսոմու հաւաքված ուխտաւորներին: Պապը տեսնվեցաւ նրանց հետ կարգիւններով շրջապատված լինելով: Նա ճառ խօսեց, որի մէջ յայտնեց, որ ուրախ է աւանդել իրան խաղաղների մէջ և գտնելով նրանց մէջ միութեամբ: Նա ապրում է թշնամիների մէջ. անբարոյական մամուլը աշխատում է նրա վարկը վայր գցել և թուլացնել նրա իշխանութիւնը, սպառնալով մինչև անգամ Վատիկանը գրաւել և պապին բանտարկել կամ աքսորել: Վերջացնելով իր խօսքերը, պապը հաւատացեալներին կուրի հրաւիրեց: «Վենք հոգեւոր զէնքով կը պատերազմենք և կը յաղթենք, ասաց նա: Օրհնում եմ ձեզ և իմ հայրենիքը: Իտալիան» Գաղաքը այդ օրը բոլորովին ճանգիտ էր: Ուխտաւորների ընդունելութիւնը, որոնց թիւը երեք հազարից աւելի էր, շարունակվում էր մինչև կէսօրվայ երկու ժամը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկացիների զաղթականութիւնը Հին-Ալ-խարում այս տարի ահապին չափերի հասաւ: Մօտ 100,000 ամերիկացիներ թողն իրանց հայրենիքը, և որ նշանաւոր է, բոլորը Եւրոպա հասան մեծ փողերով: Ամերիկական բիրժայի դիրկտորը, Լոնդոնում, հաւեց, որ կլոր հաշուով իւրաքանչիւր զաղթական իր հետ բերեց 4000-ից մինչև 5000 ֆունտ ստերլինգ, իսկ ընդհանուր թիւով այդ կը կազմի 500 միլիոն դոլար գումար: Ֆինանսիստները հաւատացնում են, որ չը նախելով երկրի հարստութեանը այդպիսի գումարների կորուցիլ կարող է նկատելի կերպով աղղել Ամերիկայի տնտեսական դրութեան վրա:

Փարիզի լրագրիւնները հաստատում են, որ, իբր թէ, նախկին կայսրուհի Լիզիէի, իր վերջին անգամ Փարիզով անցկենալու ժամանակ, կտակ թողեց այնտեղի մի նստարկում մօտ, որով նա իր ժառանգ է նշանակում իշխան Ժիւլիոն մեծ որդուն, իշխան Վիկտոր Նապոլեոնին: Մատնացող անելով նրան, որպէս ցեղի ղլխաւորի վրա, նա կտակեց նրան իր թողած բոլոր կարողութիւնը գործածել բժշակապատեանների գործը պաշտպանելու համար:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 հոկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ռ., երկրորդ 92 ռ. 25 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 92 ռ. 50 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 216 ռ., երկրորդ 212 ռ. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ռ. 62 կ., երկրորդ 89 ռ. 62 կ., երրորդ 89 ռ. 75 կ., ռսկի 7 ռ. 66 կ.: Ռուսաց 1 ռ. Լոնդոնի վրա արժէ 25,87 պէնս, Ամստերդամի վրա 130,50 պէնս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 221 մարկ, Փարիզի վրա արժէ 273 ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը թող է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆ ՆՈՒԹԵԱՆ

(Հրապարակական դասախօսութիւնք Ա. Երիցեանի):

Լեզուների ծագման և զարգացման օրէնքները: —Թէ այժմ ինչ դրութեան մէջ է հայոց լեզուի ծագման խնդիրը:—Գրաբաւ լեզուի սկզբնական ձեւերը վերականգնացնելու մի փորձ և այս միջոցաւ ազգիս նախնական կենաց նկարագրութիւնը:—Բանաստեղծական այլաբանութիւն և առասպելեաց ծագումն:—Առասպելաբանութեան զարգացումն բանաստեղծութեան մէջ և հին հայոց դիցազնական վիպասանութիւնը:—Պ. Լիւնի վերջին հետազոտութիւնները և Մովսէս Խորենացու պատմութեան աղբիւրների մասին:—Գիւրը և սրա ծագման մասին ընդհանրապէս:—Նախնի հայոց սկզբնական գիրը:—Թէ այժմ ինչ դրութեան մէջ է Հայաստանում գտնուած բեկեռագրերի ընթերցանութիւնը:—Թէ որ աստիճանի է եղած Տուրանական, Ամիւտական և Արիական ազգերի ազդեցութիւնը հեթանոսական հայերի կենաց վրա:—Հայոց հեթանոսական կենսական մնացած գրաւոր յիշատակները:—Հայաստանի քաղաքական և բարոյական դրութիւնը IV դարում:—Քրիստոնէութեան ծաւալումն և ասորական-բիւզանդական ազդեցութիւնը հայոց գրականութեան վրա IV և V դարերում:—Հայոց այրութների ծագման խնդիրը և Ս. Մեսրոպայ տուած կատարելագործութիւնը:—Ս. Մեսրոպայ առաջին և երկրորդ աշակերտները արեւմտեան փիլիսոփայական ուսմանց ազդեցութեան ներքոյ:—Սուրբ Գրքի թարգմանութիւնը և նրա գրեւորագրութիւնը ներկայումս:—Ոսկէ դարի գրաբաւը և նրա ժամանակակից աշխարհագրագիտութիւնը:—Հայոց գրականութիւնը սկսում է ընկնել VI դարում:—Հերետիկոսութեանց հետ մարառիլը և հայոց կրօնական և աստուածաբանական մատենագրութիւնը V դարից մինչև X դարը:—Հայաստանի կրթութեան աստիճանը այդ միջոցում:—Արաբական լուսաւորութիւնը:—Չգտնումն դէպի եկեղեցեաց միաւորութիւնը XI դարից մինչև XIV դարը:—Բիւզանդիոյ և Հռովմայ կաթողիկոսութեան ազդեցութիւնը:—Խաչակրաց պատերազմների նշանակութիւնը հայոց պատմութեան համար:—Տրամաբանութեան մուտքը կրօնքի մէջ (բացիճանալով):—Հայոց գրականութեան արձանի դարը:—Գրաբաւի վերջնական անկումն և ժողովրդական բարբառների հետագայ զարգացումն:—Հայոց զաղթականութիւնը և սորա հետեւանքները լեզուի և գրականութեան համար:—Հայոց տպագրութեան սկզբնաւորութիւնը և գրաբաւի վերականգնացնելու ջանքերը:—Վերնադարձի Միսիսթարանց և այլոց ծառայութիւնները:—Նոր գրականական լեզու ներկայ հայոց ի Ռուսիայ և ի Տաճկաստանում:—Լեզուի և գրականական ուղղութեան մէջ գտնուած կական տարբերութիւնները Ռուսահայոց և Տաճկահայոց:—Հայոց գրականութեան ներկայ դրութիւնը:—Վիպասանութիւնը ընդհանրապէս և ժողովրդական բանաստեղծութիւնը, գիտնական և ուսումնական գրականութիւնը:—Հայոց տպագրութեան միջնակարգութիւնը:—Հայոց պարբերական տպագրութիւնը, նորա պտտմական տեսութիւնը և ներկայ դրութիւնը:

Վերջաբան:

Դասախօսութիւնները կը լինին Պ. Արծրունու թատրոնական դահլիճում հոկտեմբերի 21, 23, 28 և 30-ին: Սկիզբը ժամի 7½ երեկոյեան:

Չորս դասախօսութեանց տոմսակները միասին և առանձին առանձին կարելի է ստանալ պրատուրեանի խանութում և թատրոնի կաստայում: Տոմսակների գներն են 1 ռուբլից սկսած մինչև 15 կոպէկ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԿ ԵՐԵՒԱՅԱԿԱՆ ԼՕՏՕԹԻՖ: Ինու ընտրական ուսումնարանի հայաւաղկերանների հրատարակութեամբ: Վաճառվում է (յօգուտ նոյն դպրոցի աշակերտաց ապագայ ՀԱՅԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՆՈՒԹԵԱՆ) ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ գրավաճառանոցներում և Կուկիայի կամրջի վրա պ. Մատինեանցի խանութում: Գինն է 50 կոպ: